# ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

● 25 Հոկտ. 1929, ԷՋՄԻԱԾԻՆ,
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԷՆ.
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԴՈՒՐԵԱՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
*Խնդակցութեամբ օրհնում եմ Ձեր բազմամեայ օգտակար գործունէութիւնը Յոբելեանի առթիւ, մաղթում եմ երկար տարիներ ի պայծառութիւն Հայոց Եկեղեցւոյ, ի հաստատութիւն Երուսաղէմի Պատրիարքութեան Աթոռին։*
*Կոնդակ կ'ստանաք։*

**Գէորգ Կաթողիկոս Ամենայն Հայոց**

● 25 Հոկտ. 1929, ՀԱԼԷՊ,
ԿԻԼԻԿԻՈՅ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԷՆ.
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԴՈՒՐԵԱՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
*Սրտագին կը շնորհաւորենք Ձեր Յոբելեանը և բարձրօրէն կը գնահատենք Ձեր մատուցած ծառայութիւնները Եկեղեցւոյն, Ազգին և Գրականութեան։* **Սահակ Բ.**

● 25 Հոկտ. 1929, ԷՋՄԻԱԾԻՆ,
ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԷՆ.
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԴՈՒՐԵԱՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
*Գերագոյն Հոգևոր Խորհուրդի անդամներն իրենց եղբայրական ողջոյններն ու խնդակցութիւնները յայտնում են Ձեր Յիսնամեայ արդիւնաւոր գործունէութեան համար։*

**Խորէն, Բագրատ, Մեսրոպ, Գէորգ**
*Արքեպիսկոպոսներ*

● 25 Հոկտ. 1929, ԲԵՐԱ. Կ. ՊՈԼԻՍ,
*Անկեղծ շնորհաւորութիւններ.*

**Պատրիարք Մեսրոպ և Թորգոմեան**

● 25 Հոկտ. 1929, ՍՊԱՀԱՆԷՆ,
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
*Սրտագին մաղթանքներ Թեմիս, Հիմնարկէքներէ դպրոցաց։* **Մեսրոպ Արքեպիսկոպոս**

● 26 Հոկտ. 1929, ԲԱՐԻԶԷՆ,
ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
*Ձեր Յոբելեանին առթիւ յարգալից շնորհաւորութիւններ և մաղթանքներ Ձեր երջանկութեան համար։* **Թորգոմ Արքեպիսկոպոս**

● 26 Հոկտ. 1929, ՆԻԿՈՍԻԱՅԷՆ,
ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
*Ձեր Յոբելեանի Տօնախմբութեան առթիւ իմ և ժողովուրդիս կողմէն կ'ուղղեմ Ձեզ անկեղծ շնորհաւորութիւններ և սրտագին մաղթանքներ։*

**Պետրոս Արքեպիսկոպոս Սարաճեան**

● 26 Հոկտ. 1929, ՄԱՆՉԵՍԴՐԷՆ,
ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵՂԻՇԷ ԴՈՒՐԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
*Ձեր Ամենապատուութեան Քահանայական Յոբելեանին առթիւ ես և իմ ժողովուրդս Ձեզ կը մատուցանենք մեր հիացման յարգալիր մեծարանքները Ձեր անգին ծառայութիւններուն համար զոր ըրիք Եկեղեցւոյն և Ազգին, միացնելով Ձեր վրայ Հայկական Առաջնորդի, Քարոզչի, Հեղինակի, Ուսուցչի, Դաստիարակի արժանիքները։ Բարձր գիրքերու հասաք, Նախ Պատրիարք Կ. Պոլսոյ և այժմ Երուսաղէմի։ Երկար տարիներ կը մաղթեմ Ձեզ եռանդագին՝ առողջութեամբ և յաջողութեամբ Սուրբ Յակոբեանց Աթոռին վրայ, որուն մեծագոյն փառքն ու ամենափայլուն զարդն էք։*

**Ղեւոնդ Եպիսկոպոս Դուրեան, Մանչեսդրի**

● 26 Հոկտ. 1929, ՓԼՕՏԻՎԼԷՆ, ԵՐՈՒԱՆԴ Եպս. Փէրտահճեանէն, երկու հեռագիր, մին Հայերէն, միւսը Ֆրանսերէն.
(Հայերէնը), ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐԵԱՆ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
*Որդիական համբուրիւ ջերմագին շնորհաւորութիւնք։* **Երուանդ**

(Ֆրանսերէնը), ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐԵԱՆ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
*Ձեր Յոբելեանին առթիւ կը խնդրեմ հաճեցէք ընդունիլ մաղթանքներն ու շնորհաւորութիւնները Հայրենակիցներու Յանձնաժողովին։*

**Փէրտահճեան Եպիսկոպոս**

● 24 Հոկտ. 1929, ՄԱՐՍԷՅԼԷՆ,
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԴՈՒՐԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
*Ջերմագին շնորհաւորութիւններ և մաղթանքներ Ձեր երջանիկ Յոբելեանին առթիւ ժողովուրդիս և իմ կողմէն։* **Գրիգորիս Եպիսկ. Պալաքեան**

● 25 Հոկտ. 1929, ԴԱՄԱՍԿՈՍԷՆ,
ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
*Ձեր Յոբելեանին առթիւ ընդունեցէք սրտագին մաղթանքներս։* **Խադ Եպիսկոպոս**

● 26 Հոկտ. 1929, ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅԷՆ,
ԴՈՒՐԵԱՆ ԵՂԻՇԷ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
*Պատկառանքով ու հիացմամբ կը խոնարհիմ Մեսրոպեան շունչով ու հոգիով սնած ու աճած գրչի շնորհալի Վարպետին, Եկեղեցւոյ անձնուէր Հովուին, Գաղափարի ու Մտքի մարդուն, Հայ ժողովուրդի անունով Ջահկիդ առջև ի խորոց սրտի կը գոչեմ ԿԵՑՑԷ՛ ՅՈԲԵԼԵԱՐ ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ, արժանաւոր Պատրիարքն Ս. Երուսաղէմի։*

**Առաջնորդական Փոխանորդ**
**Մամբրէ Վարդապետ**

● 26 Հոկտ. 1929, ԳԱՀԻՐԷԷՆ,
ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
*Ձեր Ամենապատուութեան Քահանայութեան բարեբաստիկ Յոբելեանին առթիւ հաճեցէք ընդունիլ Գահիրէի Հայութեան և ժողովներուն ակնածալի շնորհաւորութիւնները և խորունկ յարգանքը։* **Ռուբէն Քահանայ Սարգիսեան**

digitised by A.R.A.R.@

● 18 Հոկտ. 1929, ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԷՆ,
ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.

Անկեղծ շնորհաւորութիւններ Ձեր Յոբելեանին առթիւ։ Տա՜յր Երկինք որ շատ տարիներ վայելէինք Ձեր հայրական օրհնութիւնները։

**Ազատ Ենկոյեան**

● 24 Հոկտ. 1929, ՄԻԼՎՈՔԻԷՆ (Ամերիկա),
ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ, Ն. ԲԱՐՁՐ
ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ ԵՂԻՇԷ ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ
ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.

Կը շնորհաւորենք Մեծ-Ուսուցիչը, Հոյակապ Դըպրագէտը, Փառաւոր Վարդապետը Ձեր Յիսնամեայ Յոբելեանին առթիւ։ Երանի՜ թէ Երկինքի աստուածային լոյսը շարունակէ առաջնորդել Ձեզ երկար, շատ երկար ժամանակ, յօգուտ Երուսաղէմի Միաբանութեան և աշխարհականութեան և մնացած բոլոր Հայ աշխարհի։

**Հայր Խորէն Լազարեան**
**Նազարէթ Պօղոսեան**

● 24 Հոկտ. 1929, Կ. ՊՈԼԻՍ,
ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.

Սրտագին շնորհաւորութիւններ։

**Բրոֆ. Աբրահամ Տէր Յակոբեան**

● 24 Հոկտ. 1929, Կ. ՊՈԼԻՍ,
ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.

Կ. Պոլսոյ Քահանայից Միութիւնն ու Քահանաները սրտագին ջերմագին զգացումներով կը շնորհաւորեն Ձեր Յոբելեանը։

● 25 Հոկտ. 1929, ԼՈՆՏՈՆԷՆ,
ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.

Որդիական անկեղծ մաղթանքներ և սրտագին շնորհաւորութիւններ։

Խոնարհ Ծառայք, **Նուպար, Տիրան**

● 25 Հոկտ. 1929, ՍԵԼԱՆԻԿԷՆ,
ԴՈՒՐԵԱՆ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.

Դուրեան Պատրիարքի Յիսնամեայ Յոբելեանին առթիւ որդիական երախտագիտութեամբ կ'ողջունենք Ն. Ամեն. Սրբազնութեան հոգևոր և ազգային գործունէութիւնը և ջերմագին՝ մաղթենք երկար կեանք։

**Մակեդոնիոյ եւ Թրակիոյ**
**Յոբելինական Յանձնաժողով**

● 25 Հոկտ. 1929, ՄԱՂՐԷՊԻ (ԴԱՀԻՐԷ)
ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.

Ձեր Ամենապատուութեան Յոբելեանին բարեբաստիկ առիթով կը խնդրեմ որ ընդունիք մեր շնորհաւորութեանց յարգալիր մեծարանքն։

**Հայ Բարեգործական Միութիւն**
**Տիգր. Ա. Տէր Մարգարեան**

● 25 Հոկտ. 1929, ՆԻԿՈՍԻԱՅԷՆ,
ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.

Նորին Ամենապատուութեան Յոբելինական Տօնախմբութեան առթիւ Մելքոնեան Հաստատութեան Տնօրէնութիւնը, Ուսուցչական Մարմինը, Ուսանողները՝ Պաղեստինի Պատրիարքին կ'ուղղեն իրենց շնորհաւորութիւնքը և իրենց սրտագին մաղթանքները։ **Մելքոնեան Հաստատութիւն**

● 25 Հոկտ. 1929, ՀԵԼԻՈՊՈԼԻՍԷՆ,
ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՅՈՑ ՎԱՆՔ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.

Նուպարեան Վարժարանի Հոգաբարձութիւնս Դուրեան Սրբազանի Յոբելեանին սրտագինս կը մասնակցի։ **Հոգաբարձութիւն**

● 25 Հոկտ. 1929, ԼՈՆՏՈՆԷՆ,
Ն. ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԴՈՒՐԵԱՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.

Յանուն Լոնտոնի Հայ համայնքին կ'ուղղենք Ձեր Բարձր Սրբազնութեան մեր սրտագին շնորհաւորութիւնները Ձեր Յոբելեանին հանդիսութեանց առթիւ. մեծապէս կը հրճուինք տեսնելով որ բոլոր ազգը կը ներբողէ Ձեր ազգային, եկեղեցական և գրական գործունէութիւնը։

**Կարապետ Տիգլէր, Ներսէս Կիւլպէնկեան**
**Աւետամ Յակոբեան, Անիկսոս Ռեննեան**

● 25 Հոկտ. 1929, ՆԻՒ ԵՈՐՔԷՆ,
Ն. ԱՄԵՆ. ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.

Յարգալիր շնորհաւորութիւններ Ձեր Ոսկեղէնի Յոբելեանին բարեբաստիկ առթով։

**Վահան Քիւրքճեան**

● 25 Հոկտ. 1929, ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅԷՆ,
Ն. ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.

Կը համարձակիմ մատուցանել Ձեր Ամենապատուութեան իմ անկեղծ շնորհաւորութիւններս և յարգալիր մեծարանքներս Ձեր Քահանայական Յոբելեանին առթով։ **Լեւոն Մկրտիչեան**

● 25 Հոկտ. 1929, ՀԱԼԷՊԷՆ,
Ն. ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.

Ձեր Յոբելեանին առթիւ կը մատուցանեմ Ձեզ սրտագին շնորհաւորութիւններս և յարգանքներս։ **Արմէն Մազլըմեան**

● 25 Հոկտ. 1929, ԲԱՐԻԶԷՆ,
ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.

Շնորհաւորութիւններս և հիացմունքս Ձեր բարձրօրէն արժանաւոր Յիսնամեակին առթիւ։

**Մերուժան Պարսամեան**

● 25 Հոկտ. 1929, ԵԱՖԱՅԷՆ,
Ն. Բ. ՍՐԲԱԶՆՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.

Կը համարձակիմ Ձեր Բ. Սրբազնութեան մատուցանել իմ շնորհաւորութիւնները՝ սրտագին մաղթանքներով՝ Ձեր Ամենապատուութեան յաջողութեան համար։ **Ճրէսէրիմ Մուրատ**

● 25 Հոկտ. 1929, ՀԱՅՖԱՅԷՆ,
Ն. ԱՄԵՆ. ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.

Հաճեցէք ընդունել իմ յարգալիր շնորհաւորութիւնները Ձեր Քահանայական բարեբաստիկ և երջանիկ Յիսնամեակին և Պատրիարքական Գահակալութեան Տարեդարձին առթիւ։

Ձեր Խոնարհ Ծառայն **Փափազեան**

digitised by A.R.A.R.@

● 25 Հոկտ. 1929, ՀԱԼԷՊԷՆ,
ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Զուարթանոց ուրախութեամբ կը մատուցանենք Ձեզ մեր սրտիական յարգանքները և շնորհաւորութիւնները և կ'աղօթենք որ Աստուած արևշատութիւն պարգևէ Ն. Ամեն. Սրբազան Յոբելեարին։
**Ներսէս Քահանայ Թաւուզճեան, Գարեգին Քահանայ Պօղարեան, Լեւոն Չէնեան**

● 25 Հոկտ. 1929, ՎԵՆԵՏԻԿԷՆ,
ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Կը շնորհաւորենք Ձեր Յոբելեանը, մաղթելով երկարամեայ արդիւնաւորութիւն Ձեր ազգասիրական գործերուն համար։
**Մխիթարեան Միաբանութիւն**

● 25 Հոկտ. 1929, ՓԱՐԻԶԷՆ,
ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Կը խնդրեմ Ձեր Բարձր Սրբազնութենէն որ ընդունիք իմ ամենէն անկեղծ և յարգալից շնորհաւորութիւնները Ձեր Յոբելեանին առթիւ, և ապագային համար իմ բոլոր համակիր զգացումներս։
**(Գալուստ) Կիւլպէնկեան**

● 25 Հոկտ. 1929, ՆԻՒ ԵՈՐՔԷՆ,
Մր. Գլէչֆօրա, Նիւր Իօթ,
Երուսաղէմ
Հաճեցէք Ն. Բարձրաշնորհ Սրբազնութեան Երուսաղէմի Պատրիարք Դուրեան Արքեպիսկոպոսին մատուցանել մեր սրտագին շնորհաւորութիւնները և բարեմաղթութիւնները իր Քահանայութեան Յիսներորդ Տարեդարձին առթիւ։
**Գրիլի Էչիսըն**
**Գործադիր Քարտուղար**
**Նիւր Իօք Բըլիճի**

● 25 Հոկտ. 1629, ՄԻԼԱՆԷՆ,
Ն. Բ. Սրբազնութիւն
ԵՂԻՇԷ ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Միլանի Հայ Գաղութը Ձեր Յոբելեանին առթիւ ջերմեռանդն հիացումով կը յայտնէ իր անկեղծ խղճերը և կը խնդրէ Ձեր հայրական օրհնութիւնները։
**Իտալիոյ Հայկական Գօմիթէն**

● 26 Հոկտ. 1929, ԳԱՀԻՐԷԷՆ,
ԴՈՒՐԵԱՆ ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ,
ՀԱՅՈՑ ՎԱՆՔ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Հայ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը և իր օրկանը ԱՐԵՒ կը յայտնեն իրենց ջերմագին շնորհաւորութիւնները Ն. Ամենապատուութեան ԴՈՒՐԵԱՆ Պատրիարքին իր Յոբելեանին առթիւ և կը յայտնեն իրենց հիացումը Ազգին մատուցած իր անձնուէր ծառայութեանց համար։
**Արեւ**

● 26 Հոկտ. 1929, ԳԱՀԻՐԷ,
ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Կը խնդրենք Ձեր Ամենապատուութենէն որ Ձեր Յոբելեանին առթիւ ընդունիք մեր շնորհաւորութիւնները և մեր սրտիական յարգանքները։
**Հնչակեան Կուսակցութիւն**

● 26 Հոկտ. 1929, ԳԱՀԻՐԷԷՆ,
ՀԱՅՈՑ ՎԱՆՔ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ջերմագին շնորհաւորութիւններ շատ սիրելի և յարգելի ԴՈՒՐԵԱՆ Պատրիարքին իր Յոբելեանին առթիւ։ Խմբագրութիւն **Յուսաբերի**

● 26 Հոկտ. 1929,
ԴՈՒՐԵԱՆ ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ,
ՀԱՅՈՑ ՎԱՆՔ ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Նորին Ամենապատուութիւն ԴՈՒՐԵԱՆ Պատրիարքի Յոբելեանին առթիւ կը յայտնենք մեր յարգալից և սրտիական շնորհաւորութիւնները։
**Հայկական Գեղարուեստական Միութիւն**

● 26 Հոկտ. 1929. ԳԱՀԻՐԷԷՆ,
Ն. ԱՄԵՆ. ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐԵԱՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Յարգալից շնորհաւորութիւններ եւ սրտագին մաղթանքներ։ **Հայկազեան Միութիւն**

● 26 Հոկտ. 1929, ՀԵԼԻՕՊՈԼԻՍԷՆ,
ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ն. ԱՄԵՆ. ԴՈՒՐԵԱՆԻ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Յարգանք, հիացում, շնորհաւորութիւններ, մաղթանքներ։ **Հայ Ժողովրդային Միութիւն**
Փօստարկղ 456, Գահիրէ

● 26 Հոկտ. 1929, ԱԹԷՆՔԷՆ,
Ն. ԱՄԵՆ. ԵՂԻՇԷ ԴՈՒՐԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Խորին յարգանքներով և ջերմագին մաղթանքներով կը շնորհաւորենք Յոբելեանը, համբուրելով Աջերնիդ։ ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
Նախագ. **Մազլումեան Արքեպիսկոպոս**
Ատենադպ. **Վեր. Սրամպուլեան**

● 26 Հոկտ. 1929, ՄԱՐՍԷՅԼ,
ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ազգային պատիւը եղող Ձեր փառաւոր Յոբելեանին առթիւ հաճեցէք ընդունիլ մեր յարգալից շնորհաւորութիւնները։ **Յակոբ Սելեան**

● 26 Հոկտ. 1929, ՓԱՐԻԶ,
ԱՄԵՆ. ԵՂԻՇԷ ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Յոբելեանին բարեբաստիկ առիթովը կը մատուցանենք Ձեզ մեր ակնածալի շնորհաւորութիւնները և կը մատչիմք ի համբոյր Ձեր Ս. Աջոյն։ **Քիպարեան Եպիսկոպոս**

● 26 Հոկտ. 1929, ՆԻՒ ԵՈՐՔԷՆ,
ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Շնորհաւորութիւններ եւ սրտագին մաղթանքներ ԿՈՉՆԱԿԻ կողմէ։ **Պէննէեան**

● 26 Հոկտ. 1929, ՆԻՒ ՃԸՐՍԻ,
ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐԵԱՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Յոբելեանին առթիւ լաւագոյն մաղթանքներ կը մատուցանենք։ **Մամբրէ Վարդապետ**

● 26 Հոկտ. 1929, ՊԵՐԱ Կ. ՊՈԼԻՍ,
Ն. ԱՄԵՆ. ԵՂԻՇԷ ԴՈՒՐԵԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ջերմագին շնորհաւորութիւններ։
**Թաղ. Խորհուրդ Բերայի**
**Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ**

digitised by A.R.A.R.@

26 Հոկտ. 1929, ՊԷՅՐՈՒԹ,
ԱՄԵՆ. ՏՈՒՐԵԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Անկեղծ շնորհաւորութիւններ եւ խորին յարգանքներ։

**Ծանր եւ Ագրալեան**

26 Հոկտ. 1929, ՊԷՅՐՈՒԹ,
ԱՄԵՆ. ՏՈՒՐԵԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՐ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Շնորհաւորութիւններ։

**Հայ Բէմբի Թաղական Խորհուրդ**

26 Հոկտ. 1929, ԼԱՒՈԴԻԿԷ,
ԱՄԵՆ. ՏՈՒՐԵԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Յանուն Լաւոդիկէի Հայութեան կը շնորհաւորեմ Ձեր Յոբելեանը, եւ կը մաղթեմ երկար կեանք։

**Եփրեմ Տահմուճի**

26 Հոկտ. 1929, ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ,
ԱՄԵՆ. ԵՂԻՇԷ ՏՈՒՐԵԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Աղեքսանդրիոյ Ազգ. Գլօբի կողմէ կը շնորհաւորեմ Ձեր Յոբելեանը եւ կը մատուցանեմ անկեղծ ու ակնածալի յարգանքներ. **Ներսէս Սեսարեան**

26 Հոկտ. 1929, ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ,
ԱՄԵՆ. ԵՂԻՇԷ ՏՈՒՐԵԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Աղեքսանդրիոյ Պօղոսեան Ազգ. Վարժարաններու Հոգաբարձութեան կողմէ կը շնորհաւորեմ Ձեր բարեբաստիկ Յոբելեանը, մատուցանելով Ձեզ խորին յարգանքներ։ **Ներսէս Սեսարեան**

26 Հոկտ. 1929, ԻՍԿԷՆՏԷՐՈՒՆԷՆ, ՏՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Քահանայական Յոբելեանին առթիւ կը յայտնեմ ժողովուրդիս շնորհաւորութիւնները, եւ կը խնդրեմ Ձեր Քահանայապետական օրհնութիւնները։ **Գրիգոր Աւագ Քահանայ Մինասեան եւ Իսկէնտէրունի Հայ համայնքը**

26 Հոկտ. 1929, ԳԱՀԻՐԷԷՆ,
ՏՈՒՐԵԱՆ ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ,
ՀԱՅՈՑ ՎԱՆՔ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Մեծ Վարդապետին Յիսնամեայ Քահանայութեան Յոբելեանը կը շնորհաւորեմ խորին սքանչացումով։

**Ձեր աշակերտը**
**Արշաւիր Քահանայ Վարդերեսեան**

26 Հոկտ. 1929, ՆԻԿՈՍԻԱՅԷՆ.
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Սրտագին շնորհաւորութիւններ եւ լաւագոյն մաղթանքներ։

**Սրօրս**

26 Հոկտ. 1929, ՆԻԿՈՍԻԱՅԷՆ,
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ՏՈՒՐԵԱՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Յոբելեանին առթիւ Ձեր Բ. Սրբազնութեան կ'ուղղեմ իմ անկեղծ շնորհաւորութիւններս եւ իմ սրտագին մաղթանքներս։ **Մելքոնեան**

26 Հոկտ. 1929, ԳԱՀԻՐԷԷՆ,
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՏՈՒՐԵԱՆ ՅՈԲԵԼԵԱՆԻ
ՀԱՅՈՑ ՎԱՆՔ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Հ. Բ. Ը. Միութեան Կեդր. Յանձնաժողովը իր յարգանքներն ու օրհնական շնորհաւորութիւնները կը մատուցանէ Տուրեան Ս. Պատրիարքին իր Քահանայական Ձեռնադրութեան Յիսնամեակին առթիւ եւ սրտագին մաղթանքներ կ'ընէ իր բարօրութեան եւ յաջողութեան Հայ Ազգին առաջնորդութեամբը իր սիրելի եւ պատկառելի Հովուապետին։ Վեր. Խանդամուրը մեր ներկայացուցիչն է։

**Տիգրոր Աւրաքեան**

26 Հոկտ. 1929, ՂԱԼԱԹԻԱՅԷՆ,
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Սրբազնութեան Յոբելեանին առթիւ Իւսկիւտարի Ս. Խաչի Թաղականութիւնը եւ Աղքատախնամը կը մատուցանեն սրտագին շնորհաւորութիւններ, մաղթելով Ձեզ արեւշատութիւն։

26 Հոկտ. 1929, ՍՈՒՐԱԲԱՅԱ,
ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ՏՈՒՐԵԱՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Սուրաբայայի Հայութիւնը բարձրօրէն կը գնահատէ Նորին Շնորհափայլութեան փայլուն եւ արգիւնաւոր ասպարէզը, եւ կը մատուցանէ իր սրտագին շնորհաւորութիւնները մաղթելով երկար տարիներ։

26 Հոկտ. 1929, ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅԷՆ,
ԵՂԻՇԷ ՍՐԲԱԶԱՆ ՏՈՒՐԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Յանուն մեր ժողովին եւ Աղեքսանդրիոյ Հայ Գաղութին կը մատուցանենք Ձեզ մեր ջերմագին շնորհաւորութիւնները Ձեր Յոբելեանին առթիւ, յանձին Ձեր Ամենապատուութեան ողջունելով մեր Եկեղեցւոյ ամէնէն արժանաւոր տիպար կրօնականը, նշանաւոր գրագէտը, նուրբ բանաստեղծը, մեր լեզուին գեղեցկութեան մեծ պաշտպանը, համոզիչ բարոյագէտը, խաղաղասէր վարիչը, եւ Ձեզի կը մաղթենք երկար կեանք եւ երջանիկ տարիներ։ **Ատենապետ Ժողովի**

**Տաւուտ Իժիրգեան**

26 Հոկտ. 1929, ԶԱՀԼԷԷՆ,
Ն. ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԵՂԻՇԷ ՏՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Անկեղծ շնորհաւորութիւններ, սրտագին մաղթանքներ Զահլէի Հայ Համայնքի կողմէն։

**Գինիս Քահանայ Տէրզեան**
**եւ Ժողովի Ատենապետ Յ. Յովակիմեան**

26 Հոկտ. 1929, ՊԷՅՐՈՒԹԷՆ,
ՏՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Մեր անկեղծ շնորհաւորութիւնները։

**Զենոբ Պեզճեան**

26 Հոկտ. 1929, ՊԷՅՐՈՒԹԷՆ,
ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Նիյր Իսթ Լիկը, Նորին Ամենապատուութեան Ոսկեղէն Յոբելեանին առթիւ, կ'ուղղէ իր սրտագին ողջոյններն ու շնորհաւորութիւնները։

**Արճի**

26 Հոկտ. 1929, ԻՍԿԷՆՏԷՐՈՒՆԷՆ,
ՏՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Յոբելեանին առթիւ սրտագին մաղթանքներ։ **Գրիգոր Ֆէրմանեան**

digitised by A.R.A.R.@

26 Հոկտ. 1929, ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅԷՆ,
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Ամենապատուութեան Յոբելեանին առթիւ անկեղծ շնորհաւորութիւններ և մաղթանքներ։
**Սերոբ Պետրոսեան**

26 Հոկտ. 1929, ԵԱՖԱՅԷՆ,
Ն. ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶՆՈՒԹԻՒՆ ԵՂԻՇԷ ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Անկեղծ շնորհաւորութիւններ Ձեր Յոբելեանին առթիւ և մաղթանքներ Ձեր կեանքին երկարութեան և երջանկութեան համար։
**Գարեգին Թադէոսեան**

26 Հոկտ. 1929, ԵԱՖԱՅԷՆ,
Ն. ԱՄԵՆ. ՍՐԲԱԶՆՈՒԹԻՒՆ ԵՂԻՇԷ ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Քահանայութեան Յիսնամեայ Տօնին առթիւ կը շնորհաւորեմ Ձեզ և կը մաղթեմ երկար և երջանիկ կեանք Ձեր համայնքին և Ձեր թեմին յաջողութեան համար։ **Տիգրան Հաճինեան**

26 Հոկտ. 1929, ԵԱՖԱՅԷՆ,
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Շնորհաւորութիւններ և մաղթանքներ Ձեր Քահանայութեան Յիսնամեակին առթիւ։
**Յովսէփ Գրիգորեան**

26 Հոկտ. 1929, ՊԷՅՍԱՆԷՆ,
ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Անծանօթին ընծայեալ Իտէալին սիրահար,
Սքեմին տակ երեցի, Հայ կղերին յար տիպար,
Իմաստասէր վարդապետ տարիներով լի բեղուն
Պետ Կրօնին բարեպաշտ, Յիսնամեակին նուիրում։
**Տոքթ. Յ. Թօրեան**

26 Հոկտ. 1929, ՄԷՏԱԿԱ (Եթովպիա),
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԴՈՒՐԵԱՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Անկեղծ շնորհաւորութիւնք։ **Սէֆիլեան**

26 Հոկտ. 1929, ՀԱՅՖԱՅԷՆ,
Ն. ԱՄԵՆ. ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՂԻՇԷ ԴՈՒՐԵԱՆ.
Կը խնդրենք որ ընդունիք մեր յարգալիր շնորհաւորութիւնները Ձեր Քահանայութեան Յիսնամեակին և Գահակալութեան Տարեդարձին առթիւ։
Ձեր Անձնուէր Ծառայք **Թաշճեան Եղբարք**

26 Հոկտ. 1929, ՀԱՅՖԱՅԷՆ,
Ն. Ամենապատուութիւն
ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Կը խնդրեմ որ ընդունիք իմ խոնարհ շնորհաւորութիւններս Ձեր Քահանայութեան Յիսնամեակին և Գահակալութեան Տարեդարձին առթիւ։
Ձեր անձնուէր ծառայն **Գրիգոր Արարբեան**

26 Հոկտ. 1929, ՀԱՅՖԱՅԷՆ,
Ն. ԱՄԵՆ. ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐԵԱՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Կը խնդրեմ որ ընդունիք իմ յարգալիր շնորհաւորութիւնները Ձեր Քահանայութեան Յիսնամեակին և Պատրիարքական Գահակալութեան առթիւ։
Ձեր անձնուէր ծառայն **Եզնիկ Պօյաճեան**

26 Հոկտ. 1929, ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ,
ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ամենապատուութեանդ Յիսնամեայ Յոբելեանին առթիւ կրթարանիս ուսուցիչներով, ուսանողներով կուգամ խնդրելու որ ընդունիք իբրև Հոգեւոր Հայր՝ մեր որդիական երախտագէտ սրտի շնորհաւորութիւնները, իբրև շնորհալի եկեղեցական՝ մեր հաւատաւոր հոգիներուն ակնածալից յարգանքը, իբրև պերճաբան քարոզիչ՝ մեր դմայլանքին վերացումը, իբրև անստգիւտ գրագէտ և տիպար ուսուցիչ՝ մեր իմաստասէր և գեղասէր հոգիներու մատուցումը, իբրև ազնուական նկարագիր՝ Ձեզի նմանելու մեր բաղձանքն և ուխտը, իբրև մեր խաւարակուռ իրականութիւնը արփաւետող լոյս և ազատ հոգիներու հաղուագիւտ մխիթարութիւններէն մին՝ արեւշատ կեանքի մեր ջերմագին մաղթանքները։
**Տէր Հայկազուն Քհնյ.**

26 Հոկտ. 1929, ԱԹԷՆՔԷՆ,
Ն. ԱՄԵՆ. ԵՂԻՇԷ ԴՈՒՐԵԱՆ,
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Յիսնամեայ Քահանայութեան Յոբելեանին առթիւ սրտագին շնորհաւորութիւններ, մաղթանքներ և ողջամբոյրներ։
ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
Նախագահ **Մազլըմեան Արքեպիսկոպոս**
Անդամք **Գրգեաւորեան**, **Տամլամեան**

26 Հոկտ. 1929, ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ,
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Աղեքսանդրիոյ Պօղոսեան Ազգային Վարժարաններու 650 աշակերտները այսօր հանդիսաւոր հաւաքոյթի մէջ կը փութան յայտնել յանկայս իրենց երախտագիտական զգացումներն ու խորին ակնածանքը Ձեր Ամենապատուութեան Յիսնամեայ Յոբելեանին առթիւ։
**Աշակերտութիւն**

26 Հոկտ. 1929, ԶԱԿԱԶԻԿ,
ՆԱԽԱԳԱՀ ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Կամսարական Լիմիթըտ Տան Հայ Պաշտօնէութեան և իմ կողմէ մեր սրտագին շնորհաւորութիւնները կ'ուղղենք բանաստեղծօրէն հոգեորական և հոգեւոր բանաստեղծ Սիրելի Դուրեան Պատրիարքին, մաղթելով տօնել իր Ոսկեայ(?) Յոբելեանը Հայ Հայրենիքին մէջ։
**Գասպար Իփէքեան**

26 Հոկտ. 1929, ԲԵՐԱ Կ. ՊՈԼԻՍ,
Ն. ԱՄԵՆ. ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Անկեղծ Շնորհաւորութիւններ։
**Սմբատ Եպիսկոպոս**

26 Հոկտ. 1929, ԼԱԽՈԴԻԿԷ,
Ն. ԱՄԵՆ. ԵՂԻՇԷ ԴՈՒՐԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Որդիական շնորհաւորութիւններս Ձեր Յոբելեանին առթիւ։ **Յարութիւն Մարինանեան**

26 Հոկտ. 1929, ՆԻՒ ԵՈՐՔԷՆ,
Ն. ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶՆՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Նիւ Եորքի Առաքելական եւ Աւետարանական Եկեղեցեաց Հայերը մասնաւոր հաւաքոյթ մը սարքեցին տօնելու համար ոսկեղէն Յոբելեանը Ձեր Ամենապատուութեան եւ մատուցանելու համար Ձեզի իրենց սրտագին շնորհաւորութիւնները։
**Մամբրէ Վարդապետ եւ Վեր. Կէօրկիզեան**

digitised by A.R.A.R.@

● 27 Հոկտ. 1929, ՊԷՅՐՈՒԹԷՆ,
ԱՄԵՆ. ՏՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ջերմօրէն շնորհաւորելով օրհնութիւններ կը հայցենք։ Տէր Սողանէնմէջեան
Տէր Գէորգորեան

● 27 Հոկտ. 1929, ՀԱՅՖԱ,
ԱՄԵՆ. ՏՈՒՐԵԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՐ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Քահանայութեան Յիսնամեայ Յոբելեանին ու Գահակալութեան Տարեդարձին առիթով կը մասնակցինք Ձեզ մեր յարգալիր շնորհաւորութիւններ։
Անձնուէր ծառայք
Յակոբ եւ Արգար Գէորգեան

● 27 Հոկտ. 1929, ԽԱՖԱՅԷՆ,
Ն. ԱՄԵՆ. ԵՂԻՇԷ ՏՈՒՐԵԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Յոբելեանին առիթով կը մաղթեմ Ձեզ երջանիկ ու երկար կեանք։ Գաճիկ Սերեան

● 27 Հոկտ. 1929, ԽԱՖԱՅԷՆ,
Ն. ԱՄԵՆ. ՍՐԲԱԶՆՈՒԹԻՒՆ ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Յոբելեանին առթիւ հաճեցէք ընդունիլ իմ որդիական սրտագին շնորհաւորութիւններս եւ յարգանքներս։ Գեղազարդ Սարաճեան

● 27 Հոկտ. 1929, ԽԱՖԱՅԷՆ,
Տ. ԵՂԻՇԷ ՏՈՒՐԵԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Կը շնորհաւորեմ Ձեր Յիսնամեայ Յոբելեանը եւ կը մաղթեմ որ երկար տարիներ մնար Ս. Աթոռին վրայ։
Անդրանիկ Պալայեան

● 27 Հոկտ. 1929, ԽԱՖԱՅԷՆ,
ԱՄԵՆ. ԵՂԻՇԷ ՏՈՒՐԵԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Սրբազնութեանդ Յիսնամեայ Յոբելեանին առթիւ հաճեցէք ընդունիլ յարգալիր շնորհաւորութիւններս ու բարեմաղթութիւններս։ Յարութիւն Եսայեան

● 27 Հոկտ. 1929, ԽԱՖԱՅԷՆ,
ԱՄԵՆ. Տ. ԵՂԻՇԷ ՏՈՒՐԵԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ
ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Յիսնամեայ Յոբելեանին առիթով կը շնորհաւորեմ զՁեզ եւ երջանիկ ու երկար կեանք կը մաղթեմ։
Խաչատուր Թաղէոսեան

● 27 Հոկտ. 1929, ԴԱՀԻՐԷԷՆ,
Ն. ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՏՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Յարգանօք կը խնդրենք Ձեզմէ որ ընդունիք մեր ջերմագին շնորհաւորութիւնները Ձեր Յոբելեանին առթիւ եւ մեր մաղթանքները շատ մը տարեդարձներու համար։
Աշխէն, Արտաշէս Հիւրմիւզ

● 27 Հոկտ. 1929, ԱՐԹՕՍԷՆ,
Ն. ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Շնորհաւորութիւններ. երկար տարիներ կը մաղթենք։
Ա. Մասունի
Հայ Ժողովուրդ Արբօսի

● 27 Հոկտ. 1929, ՂԱԼԱԹԻԱՅԷՆ,
ԵՂԻՇԷ ՏՈՒՐԵԱՆ Ս. ԱՐՔԵՊՍ. ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Քահանայական Յոբելեանին առթիւ շնորհաւորութիւններ եւ յարգանքներ։
Գրիգոր Վարդապետ Գուսան

● 27 Հոկտ. 1929, ՊԷՅՐՈՒԹԷՆ,
ՏՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Յոբելեանին առթիւ կը մատուցանենք Ձեզ շնորհաւորութիւններ եւ մաղթանքներ
Հ. Բ. Ը. Միութիւն Տեղական Մասնաճիւղ

● 27 Հոկտ. 1929, ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ,
ՏՈՒՐԵԱՆ Ս. ԱՐՔԵՊՍ. ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Պատկառանօք կ՚ողջունենք Ձեր Յոբելեանը, մաղթելով որ մը տօնել Ձեր ադամանդ Յոբելեանը։
Վահրամ Արծրունի
Գարեգին Պօյաճեան

● 27 Հոկտ. 1929, ՎԱՌՆԱՅԷՆ,
Ն. ՍՐԲԱԶՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Շնորհաւորութիւններ Ձեր Յոբելեանին առթիւ։
Հայ Ժողովուրդ
Պօյաճեան

● 27 Հոկտ. 1929, ՄԱՐՍԷՅԼ,
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Կը շնորհաւորեմ Ձեր Ամենապատուութեան Յոբելեանը։
Սահարճեան

● 27 Հոկտ. 1929, ՋԱԿԱԶԻԿ,
ՏՈՒՐԵԱՆ ՅՈԲԵԼԵԱՆԻ
ԿԴՐՆԿՆ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ջակազիկի փոքրիկ գաղութը սրտագին կը ձայնակցի այն խանդավառութեան զոր յառաջ բերաւ պատկառելի Հօր եւ նշանաւոր Եկեղեցականին Յոբելեանը. որդիական խոնարհ յարգանքներ։
Վան Թաղական Խորհրդոյ
Սանսալեան

● 27 Հոկտ. 1929, ՍԱՆՖՐԱՆՋԻՍԿՕՅԷՆ,
ՏՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Յոբելեանին առթիւ հաճեցէք ընդունիլ Քալիֆօրնիոյ բոլոր Հայոց սրտագին շնորհաւորութիւնները եւ բարեմաղթութիւնները որ երկար ապրիք Ձեր արդիւնաւոր կեանքը ի բարգաւաճութիւն Ձեր պատրիարքական Աթոռին։
Կը խնդրեմ Ձեր հայրական օրհնութիւնները
Գարեգին Ապիկեան

● 27 Հոկտ. 1929, ՍԱՅՏԱ (ԼԻԲԱՆԱՆ),
ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ՏՈՒՐԵԱՆ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Սիդոնի Հայոց որդիական անկեղծ շնորհաւորութիւնները։ Հայր Խաչիկեան

● 27 Հոկտ. 1929, ՊԷՅՐՈՒԹԷՆ,
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ՏՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Յոբելեանին առթիւ պաշտամանք կատարեցինք հազարաւոր հայրենակիցներու ներկայութեամբ. Լիբանանու բոլոր Հայոց անունով երկար կեանք կը մաղթենք Ձեզի։
Եղիշէ Արքեպս. Կարօեան
Ատենապետ Քղրին. ժողովոյ՝ Հազարապետեան
Ատենապետ Տնտեսական Խորհրդոյ՝ Տամամեան
Ատենապետ Ուսմնկն. Խորհրդոյ՝ Թօփճեան

● 27 Հոկտ. 1929, ՓԱՐԻԶԷՆ,
Ն. ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՏՈՒՐԵԱՆ ԵՂԻՇԷ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Փարիզի հայ գաղութը, համախմբուած տօնելու հա-

digitised by A.R.A.R.@

մօր Ձեր բարեբաստիկ Յոբելեանը, կը յայտնէ իր հիացումը Ձեր հոյակապ անձին, որով Ազգը կրնայ պարծիլ, եւ հանդիսաւոր ողջունմամբ կ'ողջունէ Ձեր Ամենապատուութեան իր ջերմագին շնորհաւորութիւններն ու անկեղծ մաղթանքները Ձեր արեւշատութեան համար եւ կը մատուցանէ իր որդիական մեծարանքը եւ անձնուէր յարգանքը։

Ի դիմաց Փարիզի հայ գաղութին
**Վարչութիւն Հայոց Եկեղեցւոյ**

27 Հոկտ. 1929, ՓԱՐԻԶԷՆ,
ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Յարգալիր եւ ջերմագին շնորհաւորութիւններ։
**Լեւոն Կիւմիւշկերտան**

27 Հոկտ. 1929, ՓԱՐԻԶԷՆ,
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Բախտն ունիմ ողջունելու Ձեր Ամենապատուութեան Յոբելեանը եւ մաղթել Ձեզ յաջողութիւններով լեցուն կեանք։ **Նարատունկեան**

27 Հոկտ. 1929, ՓԱՐԻԶԷՆ,
ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ջերմագին կը շնորհաւորեմ Ձեր Ամենապատուութեան քահանայական Յոբելեանը եւ կը մաղթեմ երկար կեանք հայ ազգին եւ հայ գրականութեան բարիքին համար։ **Գալուստ Կիւլպէնկեան**

28 Հոկտ. 1929, ՓԱՐԻԶԷՆ, Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ
Ն. ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Յոբելեանին առթիւ անկեղծ շնորհաւորութիւններ կ'ուղղենք Ձեզ եւ կը միացնենք մեր մաղթանքներն ալ որ երկար ատեն վարէք ձեր բարձր պաշտօնները, որոնք այնքան օգտակար եղած են Ազգին։
**(Հ. Բ. Ը.) Միութիւն**

28 Հոկտ. 1929, ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ,
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Պուէնոս Այրէսի Հայերը, ժողով մը ըրին տօնախմբելու համար Ձեր Յոբելեանը եւ միաձայնութեամբ որոշեցին ուղղել Ձեզ իրենց անկեղծ շնորհաւորութիւնները եւ յարգալիր իղձերը։

28 Հոկտ. 1929, ՊՈՍՏՈՆԷՆ,
Ն. ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Մեծագոյն Պոստոնի Հայերը, Հկտմ. 27, Կիրակի օր, հրապարակային մեծ ժողովի մը մէջ, որ տեղի ունեցաւ Ֆրանքլին Իւնիըն սրահը, Ձեր անձին հանդէպ որդիական յարգանքի խորին զգացումներով, միաձայնութեամբ որոշեց արտայայտել Ձեզի իրենց անկեղծ շնորհաւորութիւնները, Ձեր քահանայական ձեռնադրութեան Յիսներորդ տարեդարձին առթիւ եւ Ձեր Սրբազնութեան մաղթել շատ երջանիկ եւ արգիւնաւոր տարիներ։
**Ատեն. Ծ. Վրդ. Գասպարեան**
**Ց. Ս. Ճէլալեան**

28 Հոկտ. 1929, ԳԱՀԻՐԷԷՆ,
ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Գահիրէի ազգային ժողովները եւ հայ հասարակութիւնը, ժողով մը գումարելով Ձեր փառաւոր Յոբելեանին առթիւ, խորապէս կ'արտայայտեն իրենց միաձայն յարգանքն ու հիացումը Ձեր Ամենապատուութեան քահանայական շրջանի յիսնամեակին համար եւ ջերմագին մաղթանքներ կ'ուղղեն Ձեզ յանուն ազգային երջանկութեան։
**Յոբելենական Յանձնաժողով**

29 Հոկտ. 1929, ՓԱՐԻԶԷՆ,
Ն. ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Բարեբախտութիւն մըն է ինծի համար մատուցանել Ձեր Ամեն. Սրբազնութեան իմ ամէնէն սրտագին եւ յարգալիր շնորհաւորութիւններս Ձեր Յոբելեանին առթիւ։ **Պօղոս Նուպար**

29 Հոկտ. 1929, ՏՐԷԶՏԷՆԷՆ,
ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐԵԱՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Հայ Օգնական Մարմինը Ձեր քահանայութեան Յոբելեանին առթիւ կը մատուցանէ իր մաղթանքները, եւ Աստուծոյ օրհնութիւնները կը հայցէ Ձեր ապագային համար։ **Տքր. Պարոնիկեան**

30 Հոկտ. 1929, ՀԱԼԷՊԷՆ,
Ն. ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Ձեր Յոբելեանին առթիւ անկեղծ մաղթանքներ եւ սրտագին շնորհաւորութիւններ։
Հալէպի Հայ Բողոքական Եկեղեցւոյ համար
**Յարութիւնեան**

2 Նոյեմբեր 1929, ՍՕՖԻԱՅԷՆ,
ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ
Շնորհաւորութիւններ Ձեր Յոբելեանին առթիւ եւ սրտագին մաղթանքներ։ **Թաղականութիւն**

3 Նյմբ. 1929, ՀԱԼԷՊԷՆ,
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ, ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Հալէպի Ազգային Դպրոցի շրջանաւարտից ընկերակցութիւնը, որ տօնախմբեց Ձեր Ամենապատուութեան Յոբելեանը, կը մատուցանէ Ձեզի իր որդիական յարգանքները սրտագին շնորհաւորութիւններով եւ կը խնդրէ Ձեր հայրական օրհնութիւնները
**(Լեւոն) Չէնեան**

4 Նյմբ. 1929, ԼԱ ԿՕՏԻՆԻԷՌԷՆ,
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Երէկ տօնախմբեցինք Ձեր քահանայութեան Յոբելեանը, այս առթիւ Համբրա Գարակէօզեան Տան պաշտօնէութիւնն ու աշակերտները որդիական ակնածութեամբ կը մատուցանեն Ձեզ իրենց խորին յարգանքները եւ իրենց սրտագին հիացումը հմուտ Ուսուցչին եւ մեծ Բանաստեղծին։
**(Նուպար) Դաւիթեան**

6 Նյմբ. 1929, ՆԻԿՈՍԻԱՅԷՆ,
ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐԵԱՆ, ՀԱՅՈՑ ՎԱՆՔ
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Երախտագիտութեամբ կը շնորհաւորեմ Ձեր Ամենապատուութիւնը։ **Հ. Պէօրքն**

8 Նյմբր. 1929, ՄՕՆՐԷԱԼԷՆ,
ԴՈՒՐԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ,
ԵՐՈՒՍԱՂԷՄ.
Մօնրէալի հայ գաղութը Ձեր Ամենապատուութեան կ'ուղղէ իր սրտագին շնորհաւորութիւնները Ձեր ոսկեղէն Յոբելեանին առթիւ։
**Հայր Զգօն Զարուհեան**

digitised by A.R.A.R.@